[illegible] ***16-***[illegible] [illegible]-[illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]

Հանդիպումն անցկացվեց Ախալցիխեում, Սամցխե-Ջավախեթիի երկրամասային վարչությունում: Հանդիպմանը ներկա էին երկրամասի պետական լիազոր-նահանգապետ Ակակի Մաչուտաձեն, մունիցիպալիտետների վարչությունների նախագահները, փոխնախագահները եւ սակրեբուլոյի նախագահները:
Ջուրաբ Ժվանիայի անվան պետական վարչական դպրոցի տնօրեն Քեթեւան Ջաղելին շնորհանդեսին խոսեց 2014 թվականին դպրոցի կողմից իրականացված աշխատանքների եւ 2015 թվականին ծրագրված նախագծերի մասին:
«Մենք ներկայացրինք տեղեկատվություն եւ լսեցինք տարածաշրջանում առկա հիմնախնդիրների մասին, ինչն օգտագործելու ենք ուսումնական ծրագրերը կազմելիս»,- ասաց Քեթեւան Ջաղելին եւ հավելեց, որ Սամցխե-Ջավախեթին վարչական դպրոցի առաջնահերթային տարածաշրջաններից է: «Ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջանները մեր դպրոցի առաջնահերթությունն են: Փոքրամասնության ներկայացուցիչներին աջակցում են ինչպես մասնագիտական զարգացման, պետգնումների, ֆինանսական մենեջմենտի, հանրային կառավարման եւ ձեռներեցության իրականացման գործերում, այնպես էլ սովորեցնում ենք պետական լեզուն»,- նշեց Ջաղելին:
Հանդիպմանը Ախալքալաքիի մունիցիպալիտետում պետական լեզվի ուսուցման առումով ձեռք բերած հաջողությունների մասին խոսեց մունիցիպալիտետի վարչության նախագահ էդուարդ Աղասարյանը. «Շատ դժվար է աշխատակիցներին մեկ կամ երկու ամսով Քութայիսի գործուղելը: Ճիշտ է, Ջուրաբ Ժվանիայի անվան դպրոցը ստանձնել է պարտավորություն եւ հնարավորություն ընձեռել երիտասարդներին համապատասխան կրթությամբ ապահովելու հարցում: Վրաց լեզվի իմացությունն անչափ նշանակալից է մեր շրջանի համար»:
Նշենք, որ Քութայիսիում գործող Ջուրաբ Ժվանիայի անվան պետական վարչական դպրոցն ունի տարածաշրջանային ուսուցման 8 կենտրոն: Դրանցից երկուսը գործում են Սամցխե-Ջավախեթիում, հինգը՝ Քվեմո Քարթլիում եւ մեկը՝ Կախեթիում: Հաջորդ տարվա համար ծրագրվում է եւս երկու տարածաշրջանային կենտրոնի բացում:

[illegible] [illegible]

[illegible]